



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



« 14 » 07 2021թ.

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ 0125-21**

**Ձեռնարկողը՝**

**«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ**

Շիրակի մարզ, գ. Ախուրյան 2601

**Գործունեությունը՝ Այգաբացի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ փեղամասերի օգտակար հանածոյի արդյունահանման ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեպլություն**  
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ՔՓ **0 1 2 5 - 2 1**  
< 14 > 07 2021թ.

**Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի օգտակար հանածոյի արդյունահանման ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝ «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ  
 Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/  
 Նախագծային փաստաթղթեր  
 Տեղադրման վայրը՝ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք

**Ներածական մաս.** «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ընդլայնում և ժամկետի երկարաձգում, որի նախագիծը կատարված է «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Այգաբացի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի ընդլայնումը՝ որպես նախատեսվող գործունեություն դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

**Նկարագրական մաս.** Այգաբացի անդեզիտաբազալտների հանքավայրը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի վարչական սահմաններում: Ընկերություն կողմից հետախուզված և ներկայում նախագծված 1-ին և 2-րդ տեղամասերը Այգաբաց գյուղից գտնվում են համապատասխանաբար՝ 2.0 կմ հյուսիս-արևմուտք և 1.5 կմ արևմուտք: Տեղամասերի միջև հեռավորությունը կազմում է 0.9-1.1 կմ:

Երկու տեղամասերի համար հայցվող տարածքները համապատասխանաբար կազմում են՝ 14.94հա և 6.93հա: Հանքավայրի երկու տեղամասերը բնութագրվում են հետևյալ աշխարհագրական կոորդինատներով.

1-ին տեղամաս	2-րդ տեղամաս
40° 43' 4.80" հյուսիսային լայնության	40° 42' 23.72" հյուսիսային լայնության
43° 53' 3.68" արևելյան երկայնության	43° 53' 1.04" արևելյան երկայնության

Տեղամասերը սահմանափակված են հետևյալ կոորդինատների սահմաններում ARM WGS-84 համակարգով՝

1-ին տեղամաս՝ S=4.94 հա

2-րդ տեղամաս՝ S= 6.93 հա



1. X=4509958 Y=8405572
2. X=4510008 Y=8405830
3. X=4509890 Y=8405758
4. X=4509716 Y=8405673
5. X=4509776 Y=8405508

- 1.X=4508754 Y=8405577
- 2.X=4508823 Y=8405738
- 3.X=4508753 Y=8405940
- 4.X=4508597 Y=8405933
- 5.X=4508600 Y=8405755
- 6.X=4508600 Y=8405560

Լեռնագրական տեսակետից տարածքի հյուսիսային և արևելյան մասերը հարթավայրային են, իսկ կենտրոնականը՝ բլրային տարածք է: Հանքավայրի հետախուզման ժամանակ պարզվել է, որ հորատանցքերում և տեղամասում ջրերը բացակայում են՝ պայմանավորված անդեզիտաբազալտների բարձր ջրաթափանցելիությամբ և տեղամասեր թափանցող ջրերը բնական դրենաժով կհեռացվեն կամ ճեղքերով կթափանցեն ավելի խորը հորիզոններ:

Հանքավայրի /2 տեղամասերի/ պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի կողմից 2010թ. հուլիսի 6-ի N 265 որոշմամբ: Ընկերության կողմից ՇԱԹՎ-29/148 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ 7 տարվա ընթացքում ամբողջությամբ արդյունահանվել է երկրորդ տեղամասի հաստատված պաշարները: 1-ին տեղամասի 1-A բլոկի 1.5հա մակերեսով տարածքից 2018-2020թթ արդյունահանվել է 66.99հազ.մ<sup>3</sup> օգտակար հանածո, տեղամասում մնացորդային պաշարները 01.01.2021թ դրությամբ կազմում են 671508մ<sup>3</sup>:

ՀՀ Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքի ընդլայնման և պաշարների վերազնահատման նպատակով «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից իրականացվել է երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքում հանքավայրի պաշարները վերազնահատվել և վերահաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական ընդերքաբանական փորձաքննական հանձնաժողովի 12.10.2020թ. թիվ 4 եզրակացությամբ հետևյալ քանակներով.

1-ին տեղամասում՝ 3-Յ բլոկ - 275.0հազ.մ<sup>3</sup>,

2-րդ տեղամասում՝ 4-Յ բլոկ - 3095.8հազ.մ<sup>3</sup>:

Անդեզիտաբազալտներն իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով պիտանի են շինարարական խճի (ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95) և ավազի (ԳՕՍՏ 8736-2014) արտադրության համար:

Հանքավայրի երկու տեղամասերում մարվող պաշարների քանակը կազմում է՝

1-ին տեղամասում՝ (1- A և 3- B բլոկներ) 946508մ<sup>3</sup>,

2-րդ տեղամասում՝ ( 4-Յ բլոկ) 3095.8 հազ.մ<sup>3</sup>:

Արդյունահանվող պաշարների քանակը 1-ին տեղամասում կազմում է 814.4հազ.մ<sup>3</sup>, 2-րդ տեղամասում՝ 2 628.0հազ.մ<sup>3</sup>: Տարեկան արտադրողականությունն ըստ մարվող պաշարի 1-ին տեղամասում կազմում է 47325.4մ<sup>3</sup>, 2-րդ տեղամասում՝ 154790մ<sup>3</sup>, իսկ ըստ արդյունահանվող պաշարների 1-ին տեղամասում կազմում է 40720մ<sup>3</sup>, 2-րդ տեղամասում՝ 131400մ<sup>3</sup>: Հանքավայրի ծառայման ժամկետն ընդունված է 20 տարի:



1-ին և 2-րդ տեղամասերի հետախուզված տարածքներում օգտակար հանածոյի միջին հզորությունները կազմում են՝ 1ին տեղամասում 20.5մ, 2-րդ տեղամասում 44.66մ, իսկ մակաբացման ապարների միջին հզորությունները, համապատասխանաբար կազմում են՝ 2.51մ և 3.18մ: Մակաբացման ապարները բնութագրվում են 1-ին տեղամասում՝ 0.2-0.3մ /միջինը 0.24մ/ հզորությամբ հողաբուսական շերտով և դելյուվիալ բերվածքներով (կավերով, ավազակավերով՝ անդեզիտաբազալտների տարաչափ բեկորների պարունակությամբ), 2-րդ տեղամասում՝ 1.6-ից 5.0մ հզորությամբ դելյուվիալ բերվածքներով: Հողաբուսաշերտի պահպանության նպատակով ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան նախատեսվել են պահպանության միջոցառումներ:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով. հորատապայթեցման աշխատանքներով: Նախագծվող տեղամասերը վերջնական դիրքում կունենան հետևյալ պարամետրերը՝

1-ին տեղամաս

- առավելագույն երկարություն՝ 330 մ
- առավելագույն լայնություն՝ 200 մ
- առավելագույն խորություն՝ 23.4 մ
- օտարման մակերես՝ 4.94 հա:

2-րդ տեղամաս

- առավելագույն երկարություն՝ 373 մ
- առավելագույն լայնություն՝ 223 մ
- առավելագույն խորություն՝ 58.9 մ
- օտարման մակերես՝ 6.93 հա:

Երկու տեղամասերը նախատեսված է մշակել ընդլայնական ընթացաշերտերով մշակման համակարգով, որի պարամետրերն են.

- աշխատանքային հանքաստիճանի բարձրություն՝ 5.0մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 80°,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 65°,
- անվտանգության առափների լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30մ:

Օգտակար հանածոյի տեղափոխումը 0.75կմ հեռավորության վրա գտնվող գործող ջարդիչ տեսակավորող կայանք /ՋՏԿ/ և մակաբացման ապարների տեղափոխումը մինչև 0.5կմ հեռավորության վրա նախատեսվող լցակույտ իրականացվելու է ավտոինքնաթափովերով:

Անդեզիտաբազալտները արդյունահանման համար նախապատրաստելու նպատակով, իրականացվելու է հորատապայթեցման աշխատանքներ՝ հորատանցքային լիցքերի կիրառմամբ: Որպես պայթեցման միջոցներ ընտրվել են դետոնացիոն քուղ և էլեկտրաճայթիչներ: Որպես պայթուցիկ նյութ օգտագործվում է ամոնիում 6XВ

